

## ԵՐԱԺԾՎԱԿԱՆ

### I. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

#### ԾԱՐԱԿՆՈՑԻ ԵՐԳԵՐԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՍՏՈՐԱԲԱԺՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Կոմիտասի մոտ կա հետևյալ դիտողություն. «Չարականի եղանակները տասն են՝ ութն այն և երկու ստեղի... Չարականի գլխավոր եղանակներին և սոցա ստորաբաժմանումների ընդհանուր թիվն է քառասուն...»<sup>1</sup>:

Այս միտքը Կոմիտասի տեսական աշխատություններում որևէ զարգացում չի ստացել: Հետագա սերունդների երաժիշտ-տեսաբանները հոյնպես քիչ են անդրադարձել Չարակնոցի մեղեղիների ու նրանց տարատեսակների համակարգման խնդրին<sup>2</sup>: Սույն էջերում մենք, իբրև եղակես ընդունելով Կոմիտասի վերը բերված դիտողությունը, կփորձենք բացահայտել նրա կողմից օգտագործած «Չարականի գլխավոր եղանակներ» և «եղանակների ստորաբաժմանումներ» տերմինների իմաստը և պարզաբանել Չարակնոցի եղանակների և նրանց ստորաբաժմանումների իսկական թիվը:

Ն. Թաշճյանի ու 19-րդ դարի այլ հետազոտողների կողմից մշակված ութ-ձայնի տեսությունը ի մի է բերել 8 հիմնական, ինչպես նաև լրացուցիչ («դարձվածք» և «ստեղի» անվանումներ ստացած) ձայնեղանակների լադային և ձայնաշարային առանձնահատկությունները: Ն. Թաշճյանի գրքում ներկայացված են 8 հիմնական ձայների, 9 դարձվածքների ու 3 ստեղիների ձայնաշարերը, ցոյց են տրված նրանց հիմնական, դիմոդ, ձգտող, կադանային հնչյունները: Չարակնոցի երաժշտական համակարգի բաղադրամասերի՝ ձայնեղանակների թիվը հասնում է քսանի (8+9+3)<sup>3</sup>: Հայտնի է, սակայն, որ լադային ձայնաշարերից բացի, ձայնեղանակային երաժշտության կարևորագույն հատկանիշների շարքին են պատկանում նաև

<sup>1</sup> Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 111:

<sup>2</sup> Առ այսօր էլ տվյալ ուղղությամբ կատարված ամենաարժեքավոր փորձն է մնում Ե. Տնտեսյանի համառոտ ակնարկը՝ Տնտեսյան Ե., Նկարագիր երգոց Հայաստանուց և եկեղեցուց, 2-րդ տպ. Խաթանպոլ, 1933, էջ 64—71:

<sup>3</sup> Թաշճյան Ն., Դասագիրք եկեղեցական ձայնագրութեան հայոց, Վաղարշապատ, 1874, էջ 24—44: Տես նաև՝ Աքայան Ռ., Հայկական խազային նոտագրությունը, Երևան, 1959, էջ 161—165:

մեղեդիական ողջ բազմազանության հիմքում ընկած ելակետային տիպար-ները<sup>4</sup>, այսինքն՝ այն կայուն մեղեդիական բանաձևերը, որոնք ծառայում են իրք կառուցղական նյութ մեղեդիներ ծավալելու համար: Կարելի է ենթադրել, որ Շարակնոցի եղանակների և նրանց ստորաբաժանումների թիվը կամ միևնույն ձայնելանակին պատկանող այնպիսի նմուշների շնորհիվ, որոնք, ծավալվելով ընդհանուր լադային ձայնաշարի սահմաններում, իրարից այս կամ այն չափով տարրերվում են բանաձևային կազմի առումով, ընդ որում «գլխավոր» եղանակների բանաձևային կազմը պետք է ունենա ստանդարտ բնույթ, մինչդեռ եղանակների «ստորաբաժանումների» բանաձևները պետք է այս կամ այն չափով անհատականացված լինեն:

Զայնեղանակների և նրանց ստորաբաժանումների տարրերակման չափանիշները մշակելիս հարկավոր է հաշվի առնել նաև շարականների խազային պատկերը: Կարելի է ենթադրել, որ ստանդարտ բանաձևներից կազմված մեղեդիներին համապատասխանում է նույնպիսի ստանդարտ խազային ֆակտորա, մինչդեռ «ստորաբաժանումների» անհատականացված բանաձևները խազային տեքստերում արտահայտված են լինում յուրահատուկ նշաններով կամ նշանների միացույցուններով: Ցուրաքանչյուր ձայնեղանակի երգերի մեծ մասը բնութագրվում է պարզ խազային պատկերով. օգտագործված խազերի ցանկը սահմանափակվում է հիմնականում շեշտ, բութ, փուշ, երբեմն նաև խոնճ, ծունկ (կամ ոլորակ) նշաններով (բոլորը՝ 1/4 տևվողությամբ) ու 2/4 տևողություն ունեցող մի քանի նշաններով (երկար, պարույկ, զարկ, երբեմն նաև վերնախաղ, ներքնախաղ, թուր, սուր և այլ խազեր), ընդ որում 2/4 խազերի օգտագործման դեպքերի ընդհանուր տոկոսը զգալիորեն զիջում է ավելի «կարճ» խազերի հաճախականությանը: Նման երգերում անպատճառ կամ անխազ վանկեր (սրանց տևողությունը նույնպես հավասար է 1/4<sup>5</sup>, մինչդեռ բառային տեքստի մեկ վանկի համապատասխանող 2 կամ մի քանի խազերից բաղկացած համակցություններ կամ իրար անմիջապես հաջորդող 2/4 տևողություն ունեցող խազեր նրանց համար բնորոշ չեն (կամ հանդիպում են գլխավորապես առանձին տեսերի «զարդարում» ավարտական հատվածներում): Պարզ խազային պատկերով օժտված բնագրերին Զայնագոյալ շարակնոցում համապատասխանում են գլխավորապես այնպիսի երգեր, որոնցում առանձին վանկերը երգվում են 1/4, ավելի հազվադեպ՝ 2/4 տևողությամբ, իսկ մեղեդիների բանաձևային կազմը առանց որևէ «ավելորդությունների» հետևում է բանաստեղծական ֆրազի կառուցվածքին: Վերջինս, անկախ վանկերի ու բառային շեշտերի բանակից, սովորաբար բաժանվում է երկու ամփոփ չափա-հնչական մասերի (կիսաստողերի), որոնց եզրափակող բառերն իրենց վրա են կրում ֆրազի գլխավոր հիմաստային շեշտերը («խմբական շեշտերը»)<sup>6</sup>: Հենց այդ շեշտերի շուրջն են համախմբվում կայուն մեղեդիական բանաձևները, ընդ որում ֆրազի առաջին կիսաստողն ավարտող բանաձևը, իրենք օրենք, երգվում է ավելի բարձր, քան ամրող ֆրազի եզրափակող բանա-


<sup>4</sup> Տես, մասմավորապես՝ Տաղմազյան Հ. Թեորիա մազկի մասն արքայության Արմենիա, Երևան, 1977, ս. 177, 186:

<sup>5</sup> Խազերի տևողության մասին տես՝ ՏՅԱԹԵԱՅԱ Ե., Եշված աշխատությունը, էջ 12—33:

<sup>6</sup> Շարականների բանաստեղծական կառուցվածքի մասին տես մեր հոդվածը՝ Հակոբյան Լ., Հայկական շարականների տաղաչափությունը, «Էջմիածն», 1986, № 7—8:

ձևը, իսկ բանաձևերի ավարտական հնչյունները, այսինքն՝ կիսատողերի խմբական շեշտեր կրող երաժշտական ձայնաստիճանները խաղում են երաժշտական լադի բարձր ու ցածր հենակետերի դեր: Երգի տաճ, իսկ երեսն նաև առանձին տողերի սկզբը հաճախ աշքի է ընկնում դեպի առաջին շեշտված վանկն ուղղված վերընթաց շարժմամբ: Տաճ ավարտը (կրկներգը) բանաստեղծական ոիթմի առումով ստվորաբար առանձնանում է նախորդ տողերից ու կիսատողերի չի բաժանվում. եզրափակող բանաձևը, իրուն օրենք, ավելի ծավալուն է ու «զարդարված» մնացած մեղեղիական բանաձևերի համեմատությամբ: Բանաձևերը և նրանց միջև ընկած հատվածները կարող են, նայած բառային տեքստի վանկային ծավալի, ընդլայնվել, կրճատվել ու նոյնիսկ սղվել, ընդ որում բոլոր փոփոխությունները կատարվում են խիստ օրինաչափ կերպով<sup>7</sup>: Նման «խիստ ոճի» մեղեղիներ, ինչպես ասացինք, բազմաթիվ են բոլոր ձայնեղանակներում. իբրև հատկանշական օրինակ բերենք թեկուզ երկրորդ կողմ (ԲԿ) հետևյալ մեղեղին համապատասխան խաղային նշաններով<sup>8</sup>:

### Նոտային օրինակ 1



Մեր օրինակներում բանաստեղծական տեքստի շարահյուսական միավորները՝ ֆրազները իրարից անջատված են ուղղահայաց գծով, կիսատողերը՝ ընդհատ ուղղահայաց գծով: ԲԿ ձայնեղանակի կայուն բանաձևերը վերցված են միջակ փակագծերի մեջ. փոխադրվելով մի երգից մյուսը, դժուաք կազմում են տվյալ ձայնեղանակին պատկանող շարականների հիմնական կառուցղական նյութ: Ինքը կե, բանաձևերը, նոյնիսկ ձայնեղանակի «գլխավոր» տարատեսակի սահմաններում, կարող են ինչ-որ չափով փոփոխվել. օրինակ, սկզբնական «դո-դո-ֆա» բանաձևը հանդես է գալիս այն դեպքում, եթե տեքստի առաջին երկու վանկերը անշեշտ են, իսկ երրորդը՝ շեշտված (այն բնականորեն ընդգծվում է ձայնի վերընթաց թոփշքով), մինչդեռ շեշտված վանկի դեպի աջ տեղափոխվելը զուգորդվում է բանաձևի ընդլայնմամբ («սի բեմոլ-դո-դո-ֆա», «սի բեմոլ-դո-դո-դո-ֆա» և այլն), իսկ դեպի ձախ տեղափոխվելը՝ բանաձևի կրճատմամբ («դո-ֆա»): Դա անդադար («ծանր») տեմպով ընթացող երգերում ձայնեղանակի ինտոնացիոն

<sup>7</sup> Տես մեր նոդված՝ Ակոպյան Լ. Мелодические структуры средневекового армянского восемьголосия и хазовое (невменное) письмо, ИФЖ АН Арм. ССР, 1985, № 2:

<sup>8</sup> Զայնագյուղաց Շարական նոգեր երգոց, Վաղարշապատ, 1875, էջ 1048: Նկատի ունենալով միմյանց կրկնող գրագիր ու տպագիր կանոնական խազակորված Շարականցների բազմաբանակությունը, մենք անթրանեշտ չենք համարում Աշել այսուղի խազային բնագրերի որևէ եզակի առյուղը:

կմախքը կարող է հարստանալ նախագեղդեղանքներով, անցողիկ ու օժանդակ հնչյուններով։ Մեր օրինակում լաղաջին հենակետների հիերարքիան ունի հետևյալ տեսք՝ բանատեղծական առաջին երկու ֆրազներում իրքն բարձր հենակետ (բարձր խմբական շեշտ կրող հնչյուն) հանդես է գալիս «մի բեմոլ»-ը, իսկ իրքն ցածր բարձր հենակետ (ցածր խմբական շեշտ կրող հնչյուն)՝ «ուե»-ն։ ամբողջ տան ավարտական հնչյունը («դո»-ն) խաղում է գլխավոր հենակետի՝ տողիկայի դերը։ Հենակետների նման հարաբերակցությունը միշտ չէ, որ ի հայտ է գալիս ԲԿ բոլոր երգերում։ որոշ դեպքերում բարձր խմբական շեշտը համապատասխանեցվում է «ուե»-ին, ցածրը՝ «դո»-ին կամ «մի բեմոլ»-ին, իսկ ծանր մեղեդիները կարող են ավարտվել ցածր «աոլ» ձայնաստիճանով։ Այս ամենը, սակայն, համեմատաբար աննըշան չափով է փոխում ձայնեղանակի ընդհանուր նկարագիրը և ոչ մի կերպ չի անդրադարձվում խազային տեքստերում, այսինքն բոլոր ձևափոխումները կատարվում են հիմնական, «գլխավոր» (Կոմիտասի տերմինարանությամբ) եղանակի սահմաններում։

Ութ-ձայն համակարգի «խիստ ոճի» օրինաչափությունների են հետեւկում նաև ստորև բերված, համակարգի մյուս բաղադրամասերի պատկանող մեղեդիները (տես նոտային օրինակ 2): Հեշտ է համոզվել, որ նրանցում դիտվող հիմնական կառուցվածքային սկզբունքները (բարձր և ցածր խմբական շեշտերի հաջորդականության օրենքը, սկզբնական բանաձևերին հատուկ վերընթաց շարժումը, 2/4 տևողությամբ երգվող վանկերի սակավաթիվությունը, խազային պատկերի պարզությունը և այլն) նույնն են, ինչ վերը ցույց տրված ԲԿ օրինակում, անկախ նմուշների լաղային ձայնաշարերի միջև եղած տարբերություններից<sup>9</sup>։

Շարականների «գլխավոր» եղանակների նման միօրինակությունը բըխում է միջնադարյան արվեստի կանոնական բնույթից, որը երաժշտության բնագավառում արտահայտված է եղել հենց ութ-ձայն համակարգով<sup>10</sup>։ Կանոնական արվեստի խիստ սկզբունքները բացառում էին որևէ անհատական հեղինակային նախաձեռնություն, վերջինս դիտվում էր իրքն գոռողության հանցավոր դրսնորում։ ստեղծագործողից պահանջվում էր ավանդաբար ընդունված, համապատասխիր նմուշօրինակների հետևելը։ Ութ-ձայն համակարգի կայուն բանաձևերը, կապված արխամիկ, բարձր ու ցածր խմբական շեշտերի հաջորդականության վեհ հիմնված տաղաչափության հետ, հանդիսանում էին միջնադարյան հոգևոր օրիններգության գլխավոր, կանոնականցված հիմք։ Խազային նշանները օգնում էին միջնադարյան երգիչ-կատարողին համապատասխանեցնել այդ համապատասխիր, անգիր սովորած նոմուշօրինակ բանաձևերը տարբեր ծավալ և առոգանություն ունեցող բառային տեքստերից։ Կանոնական ութ-ձայնի «գլխավոր» ձայնեղանակների մեղեդիական բովանդակությունը հիմնականում սահմանափակված է 1 և 2 օրինակներում ցույց տրված բանաձևերով ու նրանց կրնատված ու ընդլայնված

<sup>9</sup> Զայնագրյալ Շարական, էջ 917, 480, 394, 408, 952, 378, 93։ Որոշ օրինակները ակներևության համար բերված են փոքր-ինչ պարզեցված տեսքով (առանց գեղգեղամբ-ների և օժանդակ հնչյունների):

<sup>10</sup> Պետք է ասել, որ կանոնական ութ-ձայնի գաղափարը ընթիանուր էր ամրող բրիտանական աշխարհի համար, ընթ որում լորաբանվուր շշանում ուր նոմուշօրինակ ձայնեղանակների ընտրությունը կատարվում էր ըստ տեղական երգեցողական ավանդությունների։ Ութ-ձայնի ծագման, «ուոլ» բիի սրբազն նշանակության մասին տես՝ Werner E. The Sacred Bridge, L.—N. Y., 1959, p. 367—406։

## Նոտային օրինակ 2

113 Որք պահեն իւրեականոյ թեզ ըն-ճա-յն-ցին, և որդւոյ եռմիտսպո-մի ե-ղեն իստ-չա-կից.  
ա-դա-չա-նօի առ-ցա ին-ցո ըլ-լու:

114 Դու շերինից որ-դի կես-քո-ծոյ, և մարմ-նա-ցար ի արք-բոյ կու-սէն. որ անմանե-ից են ի  
հո-բէ, ո-դոր-մա:

115 Թու ա-մէ-նես-նան գրքած թիւրո, բարձուոր խո-զա-զու-բու-բան. ըլ-լու ա-դա-չա-նօի մի-այն  
մար-դու-նու:

116 Եկածոր եկածոր կածու փառիկն առ ի մարտի յանօք թիւրու թիւրու քանի թիւրու-նասա:  
նորդու-տ-րու-կան աշ-իսա-քու համբէ-րու-ցին ուրբար-պի-րուն. և ըլ-պա-դու-րազ-մըն չա-րին  
վա-նէ-ցին ժուկալու թիւրու-բա-րէ-իո-սուրնամբ սուրն թիւրու խը-լու-նա ի մու:

117 Խեցիւր անմանուրնան բոյնան ի բե-քան-ի-ա. կն-նագործնայ ըլ-լու արու ի բայթա-նէ:

118 Այս անդուն և անելու-նին խառակիր-պի-ցոն վե-հա-գոյն. ի փօրկն ըլ-լու եկ-եալ  
անմա-հից բագա-տրն. օրինուրիւն ա-ռայտ-ուն:

տարբերակներով. որոշ բազմազանություն է մոցվում գլխավորապես միջակ և ծանր տեսմապով ընթացող երգերում, բանաձևերի ֆակտուրային տարբերակման (մետրական միավորի կոտորակման, անցողիկ և օժանդակ հիմնայների, գեղգեղանքների օգտագործման) շնորհիվ: Նման պարզ, կայուն ու միօրինակ համակարգը, բնականաբար, պահանջում էր նույնայիսի պարզ խազային ձևակերպում:

Այսուհետեւ, Շարակնոցում կան հմուշներ, որոնք այս կամ այն չափով հեռանում են «խիստ ոճի» նորմաներից: Դրանց մի մասը՝ գլխավոր 8 ձայնեղանակների դարձվածքներն են: Հավանաբար, ութ-ձայն համակարգի կանոնականացման ընթացքում մի քանի մեղեդիական տիպարներ որևէ պատճառներով չեն վտարվել 8 ընտրյալ տիպարների շարքից ու պահպանվել են իրեն ընդհանուր համակարգի օժանդակ բաղադրամասեր.

տարրերվելով գլխավոր ձայնեղանակներից մի շաբթ կարևոր հատկանիշներով, դրանք այնուամենայնիվ չեն ստացել ինքնուրույն անվանումներ և արթեստականորեն կցվել են գլխավորներին՝ համակարգի բաղադրամասերի ընդհանուր քանակը չամեցնելու և «ուժ» թվի սրբազն հշանակությունը պահպանելու նպատակով։ Կանոնական ուժ-ձայնի օրենքների ոչ լիովին են համապատասխանում նաև բուն ձայնեղանակներին պատկանող մի շաբթ անհատականացված մեղեղիական տիպարներ, որոնք երբեմն նույնիսկ ցուցաբերում են այս կամ այն կրոններուն հեղինակի ոճի հատկանիշներ։ Նման նմուշների մեծամասնությունը առաջացել է հոգևոր օրիներգության զարգացման ուշ շրջանում (12—13-րդ դարերում), երբ միջնադարյան կանոնական, օրգանապես պահպանողական արվեստի սկզբունքները դանդաղորեն քայլայվում էին, տեղը զիշելով վերածնության շրջանի գեղագիտությանը։ Խնչակն դարձվածքների, այնպես էլ բուն ձայների անհատականացված տարատեսակների դեպքում «խիստ ոճ» նորմաների չհամապատասխանելը ակներև կերպով անդրադարձվում է նաև խազային բնագրերում։ Այժմ փորձնենք առանձնացնել և բնութագրել 8 գլխավոր ձայնեղանակների «ասորաբաժանումները» (Կոմիտասի տերմինաբանությամբ)։

**Առաջին ձայն (Ա.Ճ.)**: Բուն ԱՃ մեղեղիները իրենց բանաձևային կազմով հիմնականում նման են 2-րդ նորմային օրինակում ցույց տրված հատվածին։ ԱՃ դարձվածքը (ԱՃ՛) ունի 2 տարատեսակ, երկուսն էլ՝ միևնույն լադային ձայնաշարով (Էղական, «սոլ» վերջաձայնով)։ Տարատեսակներից մեկը պայմանականորեն կանվանենք պարզ, մյուսը՝ ընդարձակ։ ԱՃ՛ բոլոր շարականների խազային պատկերը անպատճառ ընդգրկում են երկու 2/4 հշանակներից կազմված բաղադրյալ խազեր, որոնք ցույց են տալիս վանկի 4/4 տևողություն և բնորոշ չեն բուն ԱՃ օրիներգերի համար։ «Պարզ» երգերում նման բաղադրյալ խազը (սովորաբար պարունակ+երկար, վերախաղ +սուր կամ թուր, երբեմն նաև երկար+սուր կամ թուր, հնարավոր են նաև այլ համակցություններ։ բաղադրյալ հշանակն հաճախ կցված է լինում 1—2 կետ) դրվում է բառային տեքստի 2-րդ նախադասության առաջին ուժեղ վանկի վրա, ցույց տալով այդ վանկն ընդգծող վերընթաց մեղեղիական բանաձև, ուղղված դեպի ձայնաշարի բարձրակետով՝ «ող» հնչյունը (կարելի է ենթադրել, որ հիշյալ կետերը կցվում են բաղադրյալ խազերին ձայնի բարձր ռեգիստրի հետ կապված դինամիկ ուժեղացումն ընդգծելու համար)։ Ֆրազի առաջին ուժեղ վանկին նախորդող անշեշտ վանկերը կազմում են բանաձևի «նախատակտային» մասը, որի ծավալը ստորև բերված օրինակում (Յա)՝ հավասար է 2 մետրական միավորների («ձայ-Աե...»)։ տեքստի 2-րդ նախադասության սկզբանական բաղի կամ բառային դարձվածքի վանկային ծավալի տատանումները հանգեցնում են այդ «նախատակտային» մասի ծավալի ընդլայնմանը կամ կրճատմանը (մի քանի դեպքեր ցույց են տրված Յթ օրինակում)<sup>11</sup>: 2-րդ նախադասության սկզբի ընդլայնված վանկը միակ կառուցվածքային հատկանիշն է, որի շնորհիվ ԱՃ՛ «պարզ» երգերը սկզբունքորեն տարբերվում են ուժ-ձայնի սովորական եղանակներից։ Նրանց առաջին նախադասությունները կառուցված են ըստ «խիստ» ուժ-ձայնի օրենքների՝ դեպի առաջին ուժեղ վանկ ուղղված վերընթաց սկզբա-

<sup>11</sup> Ձայնագրյալ Շարական, էջ 373—374:

<sup>12</sup> Ձայնագրյալ Շարական, էջ 110, 620:

կան բանաձևով, միմյանց հաջորդող բարձր և ցածր խմբական շեշտերով, որոնք համընկառմ են լադային հենակետների՝ «սի թեմոլ» և «սոլ» հընչունների հետ. ընդլայնված վանկին հետևող մասի կառուցվածքը նոյնպէս չի հակառակ իսկաւ ուժ-ձայնի սկզբունքներին: Անդ «պարզ» նմուշներ հանդիպում են ինչպէս հին (5—11-րդ դդ.), այնպէս էլ նոր (12—13-րդ դդ.) շարականների կազմում, երբեմն ընդգրկելով նաև բուն ԱՃ մեղեդիներին հատուկ որոշ բանաձևեր. հների շարքի է պատկանում, օրինակ, Պահոց երգերի մի մասը (վերագրվում են Մեսրոպ Մաշտոցին, 5-րդ դար), ինչպէս նաև Ղազարի հարության օրինության առաջին կեսը (վերագրվում է Սահակ Պարթևին, 5-րդ դար), ԾԱՇՀյան 8-րդ օրվա կանոնի Մեծացուցէն (վերագրվում է Մովսես Խորենացուն, 5-րդ դար) և այլն. սրանց նմանությամբ են կառուցված նաև նոր երգերը, օրինակ, բուն բարեկենդանի կանոնի Հարցը, Ողորմյան ու Տեր երկնիցը (Ներսես Շնորհալի, 12-րդ դար): Այսուհանդերձ, նույն բուն բարեկենդանի կանոնի Մեծացուցէն (տես օր 34)<sup>13</sup> Անդ «ընդարձակ» տարատեսակի նմուշ է. այսուղ բարձր ու ցածր խմբական շեշտերի բնական հաջորդականությունը շրջված է (1-ին նախադասության 1-ին կեսը ավարտվում է «սի թեմոլ» հնչյունով, երկրորդը՝ բարձր «ուե»-ով, 2-րդ նախադասության 1-ին կեսը՝ «սոլ»-ով, իսկ երկրորդը՝ «սի թեմոլ»-ով), այսինքն խմբական շեշտերի կանոնավոր հերթագայությունը կորցնում է իր կարևորագույն ձևակազմական դերը և մեղեդին որոշակի անկախություն է ձեռք բերում բառային տեքստի առոգանությունից: Կարելի է պնդել, որ տվյալ դեպքում, ի տարբերություն «իսկատ» ուժ-ձայնի նորմաների, մեղեդու կառուցվածքը ոչ թե բխում է տեքստի կառուցվածքից, այլ հետևում է սեփական, բուն երաժշտական օրինաչափությունների: Երաժշտական գործոնի դերի ընդլայնման արտահայտություններից մեկն է նաև երգի բարդ խազային ֆակտորան, բազմաթիվ 2/4 խազերով: Անդ «պարզ» տարատեսակի համար բնորշ, տեքստի 2-րդ նախադասության սկզբի ուժեղ վանկի հետ համընկնող եկաէջը հանդիպում է նաև Անդ «ընդարձակ» երգերում (34 օրինակում այն ցույց է տրված թենկորճ + երկար բաղադրյալ խազի միջոցով): Անդ դարձվածքի տվյալ տարատեսակը առաջացել է, հավանաբար, շարականի ժանրի զարգացման ուշ շրջանում, երբ ավանդական ուժ-ձայնին հատուկ բառային տեքստի և երաժշտության փոխկապակցության նորմաները իրենց տեղուն էին զիջում նոր, ավելի ազատ երաժշտական երևակայությամբ առաջնորդվող հոգեսոր օրիներգությանը. այդ տարատեսակի նըմուշներից են նաև Զատկի կանոնի Օրինության առաջին հատվածը, Համբարձման կանոնի Ծաշուն (Ներսես Լամբրոնացի, 12-րդ դար), Ննջեցելոց կանոնի «Նոր» Տեր երկնիցը («Որ անառ տնօրինութեամբ»): Ուշ ծագում ունի, հավանաբար, նաև ԱՃ պահոց շարականներին կցված Համբարձին («Համբարձի զաս իմ առ քեզ»), որն իր կառուցվածքով նման է Անդ ընդարձակ տարատեսակին:

**Առաջին կողմ՝ (Ակ):** Բուն Ակ ձայնեղանակի վերաբերյալ Ե. Տնտեսյանը նշում էր, որ այն հավանաբար պետք է դասվի դարձվածքների շարքում, մինչդեռ Ակ «դարձվածքը» իրականում 19-րդ դարում թյուրիմացության հետսանքով դարձվածքի նշանակություն ստացած բուն Առաջին կող-

<sup>13</sup> Զայնագոյալ Շարական, էջ 103:

## Նոտային օրինակ 8

Կիսօք գլուխ ի բերանիայ, ո՞ւ ամենազօք հրամա-նա-ւը չայենցը Պա-վա-րու, և յո-

ղա-կան ճակ. ո՞ւ ժոյն պարեցաւ, ապարակություն լուսաւ կնուանարար դժուարություն ըշ-մեկ:

Բակը... լը-ցոյց... և ընթացալ...

Արշաքեն-ցար ի մեր-ւու-նէ տեսն-պական կոյս մե-րի-ամ. լինի պատար ուր-բորեան անծոն:

Լուսոյն որ ի հո-րե. առան ծիլք բա-րի- ինու-ւու կնուցան-նել. Ծ- Տու.

մըն Է<sup>14</sup>: Մեր դիտումները ցուց են տպիս, որ Տնտեսյանի կողմից հաղորդած տվյալները պետք է վստահելի համարվեն: Ակ-«դարձվածքի» մեղեդիները սովորաբար լիովին համապատասխանում են ութ-ձայնի «խիստ ոճի» օրինաչափություններին և այդ առումով չեն տարբերվում մյուս ձայնեղանակների «գլխավոր», բուն տարատեսակներից (հմմտ. մեր 2-րդ նոտային օրինակը, որ Առաջին կողմը ներկայացված է հենց «դարձվածքով»): Մյուս կողմից «քուն» Ակ մեղեդիները մի շարք այլ դարձվածքների եղանակների նմանությամբ, միշտ պարունակում են առնվազն մի քանի 2/4 տևողություն ունեցող վանկ ու ընուրագրվում են համեմատաբար թանձր խազային ֆակտուրայով. Արանք գրեթե երբեք չեն հանդիպում Շարականցի թին շերտերի կազմում (տես թեկու Ս. Մաշտոցին վերագրվող Պահոց շարականները, Ս. Խորենացուն և Ա. Շիրակացուն վերագրվող Հարության Հարցերը կամ Ստեփանոս Սյունեցու անվան տակ մեզ հասած Մարտիրոսաց շարքը և Հարության ավագ օրինությունները, որ «քուն» Ա-կողմը փոխարինվում է «դարձվածքով», մինչդեռ ութ-ձայնի մնացած ձայնեղանակները ներկայացված են գլխավորապես հիմնական տարբերակներով. Ասկավաթիկ բացառությունները չեն փոխում ընդհանուր պատկերը: Որպես «քուն» Ակ թին, պարզեցված նմուշ կարելի է հիշատակել Ս. Շիրակացուն կամ Ս. Խորենացուն վերագրվող Վարդավառի 1-ին օրվա կանոնի Հարցը և Մեծացուցնեն): Շարականի ժամրի զարգացման վերջին փուլում առաջած այդ ձայնեղանակի յուրօրինակ կառուցվածքը, մեր կարծիքով, պետք է կապել շարականների տաղաչափության մեջ տեղի ունեցած բարեփոխումների հետ: Բանն այն է, որ սկսած 12-րդ դարից պահանջական, անկանոն վանկային ծավալ ունեցող կիսատողերի հերթագայության վրա հիմնված տաղաչափության կողքին հանդես է գալիս մի նոր տաղաչափական ձև, որը բոլոր առաջին կիսատողերի ծավալը մնում է փոփիսական, մինչդեռ բոլոր երկրորդ կիսատողերը (երբեմն՝ կրկներգի բացառությամբ) պարտադիր կերպով հնգավանկ են: Այս, ինչպես նաև մի շարք մյուս տաղաչափական

<sup>14</sup> Տնտեսյան Ե., Նշված աշխատությունը, էջ 65—66:

ձևերի հողինողն է եղել, հավանաբար, Ն. Շնորհալին<sup>15</sup>: Ակ ձայնեղանակի բանատեղծական տողի ավարտական հարվածի հետ համընկնող երաժշտական կայուն բանաձևի կառուցվածքը (տես օր. 4<sup>16</sup>) ենթադրում է համապատասխան բառային դարձվածքի անպատճառ հնգավանկ (կամ երբեմն նաև բառավանկ՝ տես նոյն երգի գ տաճ 1-ին տողը, որ բանաձևի 1-ին և 2-րդ քառորդները կապված են միմյանց հետ ընդհանուր լիգայով) ծավալ: Զարմանալի չէ, որ Շարակմոցում ընդգրկված «բում» Ակ երգերի ճնշող մեծամասնությունը հասել է մեզ Ն. Շնորհալու կամ Հրա հետևորդների անունների տակ:

#### Նոտային օրինակ 4

Ա  
Արքունական պատմություն պատմություն ու ուսումնական հոգու եղանակը.  
Կապություն և զնուրացու դու ի մասնավոր պատմություն ու ուսումնական հոգու եղանակը.  
Հրա նույն փառաւութեան պեր նույն մի ու ուսումնական հոգու եղանակը.  
Բ  
Արքունական պատմություն պատմություն ու ուսումնական հոգու եղանակը.  
Կապություն և զնուրացու դու ի մասնավոր պատմություն ու ուսումնական հոգու եղանակը.  
Հրա նույն փառաւութեան պեր նույն մի ու ուսումնական հոգու եղանակը.  
Դ  
Արքունական պատմություն պատմություն ու ուսումնական հոգու եղանակը.  
Կապություն և զնուրացու դու ի մասնավոր պատմություն ու ուսումնական հոգու եղանակը.  
Հրա նույն փառաւութեան պեր նույն մի ու ուսումնական հոգու եղանակը.

**Երկրորդ ձայն (ԲՃ):** «Գլխավոր» եղանակից բացի, գոյություն ունի ԲՃ լուրօրինակ տարատեսակ, որ դարձյալ կապված է Ն. Շնորհալու կողմից հայ օրիներգության մեջ մտցված տաղաչափական ձևի, տվյալ դեպքում՝ շրոտունյա յամրի հետ: Այդ տարատեսակն օգտագործված է Աղուհացից 6-րդ կիրակիի կանոնի «Որ ըղխորհուրդ ք գալըստեանդ» Օրմնությունում, Պետնեկոստեի 2-րդ օրվա կանոնի «Նոյն և նըման Հօր և որդու» Օրմնությունում, ինչպես նաև այդ օրմներգերը ընդօրինակող 7 խոտաճարակաց շարականում (Քեղինակ՝ Հովհաննես Երզնկացի, 13-րդ դար): Նշված բոլոր շարականների համար բնորոշ է բենկորճ և վերնախաղ խազերից կազմ-

<sup>15</sup> «Շնորհալիական» բանատեղծական չափերի մասին տես՝ Հակոբյան Լ., Հայկական շարականների տաղաչափությունը, էջ 72—79;

<sup>16</sup> Զայնագրյալ Շարական, էջ 627—628:

ված բաղադրյալ խազ բնագրի վերջին ֆրազի առաջին վանկի վրա (տես օր. 5ա<sup>17</sup>): Բացի այդ, խազավորված և ձայնագրյալ Շարականներում «ԲՃ» նշանի տակ են բերված մի քանի մեղեդիներ, որոնք իրականում ինքնուրույն, անհատական երգաստեղծության արգասիք են և իսկական ԲՃ-ի ու նրա տարատեսակների հետ որևէ ընդհանուր բան չունեն (հավանաբար, դրանք ԲՃ երգերի շարքին արհեստական կերպով դասելը կապված է ձայնելանակների կանոնական «ուժ» թվի սահմաններից դուրս չգալու անհրաժեշտության հետ): Այդ երգերը ունեն բարդ, բանձր խազային պատկեր, մեծածավալ են, հարուստ են գեղգեղանքներով, ընթանում են շատ դանդաղ («հուզ ծանր») տեսպով, բասային տեքստի առողջանությունից անկախ: Դրանցից մեկը՝ ս. Վահան Գողթնեցու մահվանը նվիրված «Զարմանալի է ինձ» շարականը (Վերագրվում է հերոսի քրոջ՝ Խոսրովիդուսին, 7-րդ դար) ժամանակին մեծ ժողովրդականություն էր վայելում, մյուսը՝ ս. Ղեցնոյանց կանոնի Համբարձումն է. Երկուսն ել ձայնաշարի կառուցվածքի առումով նման են Գ-կողմ-դարձվածք ձայնելանակին (տես ստորև): Այլ, բուն ԲՃ-ին ավելի նմանվող ձայնաշարի վրա է հիմնված ս. Սուրիասանց շարականը, որի բանաձևերը հանդիպում են նաև Խաչի 7-րդ օրվա կանոնի Օրհնության երկրորդ կետում: 5բ, գ, դ օրինակներում<sup>18</sup> բերված են այդ յուրօրինակ երաժշտական հուշարձանների միայն սկզբնական հատվածները:

ԲՃ ձայնելանակն ունի դարձվածք, որը Շարակնոցում ներկայացված է սակավաթիվ նմուշներով: Այդ դարձվածքի ձայնաշարի գլխավոր յուրահատկությունն է մեծացրած սեկունդա ինտերվալը լադի 2-րդ և 3-րդ աստիճանների միջև: Խազային ֆակտորան թանձր է, հարուստ է 2/4 խազներով (օր. 5ե)<sup>19</sup>:

**Երկրորդ կողմ կամ Ավագ կողմ (ԲԿ):** Մեզ արդեն ծանոթ ԲԿ հիմնական տարատեսակից բացի (նոտային օրինակ 1), նույն ձայնելանակին են պատկանում մի քանի այս կամ այն չափով անհատականացված մեղեդիական տիպարներ: Դրանցից մեկը կապված է ն. Շնորհալու և նրա հետևողդների մոտ որոշ տարածում ստացած 7-վանկանի կիսատողերից բաղկացած չափի հետ: Այդ տիպարի բնորոշ հատկանիշներն են՝ յուրաքանչյուր կիսատողի 2-րդ վանկի երկարացում ու ԲԿ հիմնական տարատեսակի համար պարտադիր, դեպի տեքստի առաջին շեշտված վանկ ուղղված վերընթաց «դո-ֆա» թոփչքի բացակայություն: Յա և Յթ օրինակներում ցույց են տրված ն. Շնորհալու և 13-րդ դարի հեղինակ Սարգիս Սևանեցու նմուշները<sup>20</sup>. հմտություն. նաև Պենտեկոստի 5-րդ օրվա կանոնի «Այսօր աղքիր գիտութեան» Տեր երկնիցը (հեղինակ՝ ն. Շնորհալի), Հովհակիմի և Աննայի կանոնի «Այսօր ցընծան երկնայինք» Տեր երկնիցը (հեղինակ՝ Հակոբ Կլանցի, 13-րդ դար) և մի քանի այլ շարականներ:

Որոշ տարածում է ստացել նաև 1/4-ից ավել տևողությամբ երգվող վանկերով հարուստ մեղեդի, որի խազային պատկերի համար բնորոշ են իրար հաջորդող զարկը և վերնախաղը (1-ին բանատեղծական ֆրազի ավարտական բանաձևում), ինչպես նաև վերնախաղ + բենկորճ համակցություն, որն անմիջապես նախորդում է երգի՝ եզրափակող բանատեղծական

<sup>17</sup> Ձայնագրյալ Շարական, էջ 624:

<sup>18</sup> Ձայնագրյալ Շարական, էջ 879, 905, 876:

<sup>19</sup> Ձայնագրյալ Շարական, էջ 94:

<sup>20</sup> Ձայնագրյալ Շարական, էջ 235, 988:

## Նոտային օրինակ 5

The musical score consists of five staves of Armenian folk music notation. The lyrics are written below each staff in Armenian. The first staff starts with: "Եղի և երման հեր և որբոյ, հոգի անձով և ուսմաքոյ. Բը շատահն հեր անիցն եւստար, առօղ որբոյ անհալուքոք, ի վերապատճառոք ի-քեր, զետի շարացն եցարբուցուր. ար-բ և Տեղ ողբուրքամք ի բատակն ի մատաքանակնեա:". The other staves continue the melody and lyrics, with some staffs having different key signatures (e.g., C major, A minor).

Փրազին (տես օր. թգ<sup>21</sup>): Տվյալ անհատականացված մեղեդիական տիպարը, հավանաբար, նույնական առաջացել է շարականների արվեստի զարգացման ուշ շրջանում. այն հանդիպում է Ն. Շնորհալու (տես, օրինակ, Մեծ երեցաբրու կանոնի «Ծմաստուն կուսանքն» Օրինությունը) և Արա Բետևորդերի (ս. Ներսես Մեծի կանոնի «Որ ըզլոյ անձառ» Օրինությունը, Բեղինակ՝ Հովհաննես Երզնկացի) շարականներում, ինչպես նաև, փոքր-ինչ տարբեր խազային պատկերով՝ Հարության ավագ օրինությունների կազմում («Օրինեսցուք», «Նայեցարուք» և «Ծանուցեք» հատվածները, որոնց թանձր խազային ֆակտորան պարզորոշ կերպով տարբերվում է 8-րդ դարի Բեղինակ Ս. Սյունեցուն Վերագրվող այս շարքի մյուս երգերի ճնշող մեծամասնությանը հատուկ պարզ ֆակտորայից. Կարելի է ենթադրել, որ Աշված հանգամանքը վկայում է տվյալ հատվածների համեմատարար ուշ ծագման մասին): Յն օրինակում<sup>22</sup> բերված է Ն. Շնորհալու մի այլ մեղեդի (հատված Աղութացից 8-րդ կիրակիի կանոնի Ողորմյա մասի), մի քանի առանձնահատուկ բաղադրյալ խագերով: Ինչ վերաբերում է Յն օրինակում ցոյց տրված Ծաղկագարդի կանոնի Համբարձի մասի հատվածին<sup>23</sup> (Բեղինակը մեզ անհայտ, հավանաբար, այստեղ դարձյալ գործ ունենար հին, հիմնականում Ս. Պարթևին վերագրվող կանոնի կազմի մեջ մտցված նորաստեղծ երգի նետ), ապա եղանակի ողիթմիկ կառուցվածքի ու խազային պատկերի միջև դիտվող ակնհայտ անհամապատասխանությունը (երգը պարունակում է

<sup>21</sup> Զայնագրյալ Ծարական, էջ 287:

<sup>22</sup> Զայնագրյալ Ծարական, էջ 284:

<sup>23</sup> Զայնագրյալ Ծարական, էջ 387:

սակավաթիվ երկարացված վանկեր, մինչդեռ խազային պատկերը հարուստ է 2/4 տևողություն ունեցող և նույնիսկ բաղադրյալ, զարդարուն նշանաւորվ) հիմք է տալիս տվյալ եղանակը ինչ-որ սկզբնական նախատիպարի աղավաղված, անձանաչելի դարձած տարրերակ համարելու համար:

ԲԿ անհատականացված նմուշներից մեկն է նաև Խաչի 4-րդ օրվա կանոնի «Խաչն կենարար» Օրինությունը, որ նույնպես թանձր խազային ֆակտուրա ունի (հեղինակ՝ Գրիգոր Մագիստրոս, 11-րդ դար, տես օրինակ Յզ<sup>24</sup>, ուր ցույց է տրված միայն երգի առաջին տունը, մինչդեռ մյուս տները ինչոր չափով մոտենում են նգ օրինակում ցույց տրված «շնորհալիական» եղանակին): Կարելի է հիշատակել նաև «խիստ ոճի» պահանջները ոչ լիարժեք կերպով բավարարող մի քանի այլ նմուշներ (հմմտ. թեկուց Հարության շարքի «Մայր լուսոյ Մարիամ» Մեծացուցեն, Խաչի 6-րդ օրվա կանոնի Օրինությունը և այլն): Ընդգծենք, որ բոլոր հիշատակված նմուշները ծավալվում են ԲԿ հիմնական ձայնաշարի սահմաններում, ունեն ընդհանուր լադային հենակետներ ԲԿ գլխավոր տարատեսակի հետ: Մյուս կողմից, ԲԿ երգերի շարքում գտնում ենք այնպիսի մեղեդիներ, որոնք երաժշտական կառուցվածքի առումով բացարձակապես նման չեն «խկական» ԲԿ-ին: Ըստ ութ-ձայնի ավանդական (թաշճանական) տեսության, ԲԿ ձայնեղանակը «դարձվածք» չունի, սակայն նշ ու ու նը օրինակներում ցույց տրված հատվածները<sup>25</sup> (որոնցից առաջինը ձայնաշարի ու հիմնական լադային հենակետների հարաբերակցության առումով նման է բուն Ա-ձայնին, իսկ երկրորդը՝ միանգամայն ինքրուրույն է) կարող են, թերևս, համարվել ԲԿ-դարձվածքներ, միայն թե նրանցից յուրաքանչյուրը Շարակնոցում ներկայացված է մեկական նմուշով: Նույնպիսի հազվադեպ երևույթ է արտակարգ հարուստ մեղեդիական ֆակտուրայով աշքի ընկնող ԲԿ-ստեղի եղանակը, երկու տարբերակներով (նշ և նշ օրինակներում բերված են նրանց սկզբնական հատվածները<sup>26</sup>: Երկրորդ տարբերակը՝ Հրեշտակապետաց կանոնի Օրինությունը պատկանում է Ն. Շնորհալու գրչին ու ընդօրինակված է նույն հեղինակի Վարդապատի 2-րդ օրվա կանոնի «Օրինեցէք մանկունք» երգում. այդ շարականների բառային տեքստերը գրված են հնգավանկ երկրորդ կիսասողերով բնութագրվող «շնորհալիական» բանաստեղծական չափով, որի հետ մենք արդեն հանդիպել ենք Ակ ձայնեղանակի կապակցությամբ, սակայն, այստեղ, ի տարբերություն Ակ մեղեդիների, տվյալ տաղաշափական առանձնահատկությունը մեղեդիական գծի զարդարուն, գեղգեղանքներով հարուստ լինելու հետևանքով չի անդրադարձվում երաժշտական կառուցվածքի մեջ:

**Երրորդ ձայն (Գձ):** Ի տարբերություն Բ-կողմ ձայնեղանակին, բուն Գ-ձայնը համածին է. Գձ շարականների մեղեդիական բովանդակությունը հիմնականում սահմանափակվում է մեր 2-րդ նույնային օրինակում բերված նմուշը կազմող ստանդարտ բանաձներով: Գձ-դարձվածքի մեղեդիները սովորաբար սկզբում են բուն Գ-ձայնում. Երաժշտական լադի փոփոխությունը կատարվում է բնագդի առաջին նախադասության 2-րդ կետում (այն ավարտվում է ոչ թե բուն Գձ երգերին հատուկ «սոլ» կիսակադանային հնչյունով,

<sup>24</sup> Զայնագրյալ Շարական, էջ 774:

<sup>25</sup> Զայնագրյալ Շարական, էջ 987, 256:

<sup>26</sup> Զայնագրյալ Շարական, էջ 257, 814:

## Նոտային օրինակ 6

Նոտային օրինակ 6

Եղի լուսաբարձր ըլլա - լուցնաշորհնեակութ և մազ - քեկովնեակութ մադրել ըստի Տօ - ղայ:

Ամառամեր - ի ու ուրբամբ և ա - հագի զօ - լուրբամբ. զարու է փերկ յաշամբի յարու - շամել ոչ - մանակն:

Պրապարակն օջա - նարակու - թան տանդեսեր է - քանչեց դու քիւրու. անառանդանական - կա:

այօթ դրա ան կարառ եղանակ և մը - քոր:

Պրապարակն օջա - նարակու - թան տանդեսեր է - քանչեց դու քիւրու. պահանջուրեալ

ոչ - խառնի ողօր մաս մայ Աս - կը - ունե:

Ամառ ընդ հրակերպանի դրամակ սուրբա - բան - ին ձերբն ու - րած և զայտի ար - ժա - լու - հոյ.

ով - սահ - ես օպ - ենալ եկ - ցու և յա - նան սուրբա:

ի գուլըստի գումարի շընթերի բանին. և աւանդույթի աւանդույթը սուրբա - բան - ին:

Ան - տա - խան ս - րա - բան հայտապահութ է լու Տըր օպ 16 - յա:

Լու - պօ - սան իշ - չօր բանս - լոր մա - յան..

Պրա - յա սկը սկը ընդունու - նայ դու.

այլ բարձր «ոէ»-ով, որն այստեղ խաղում է յուրահասող միշանկյալ լադա-յին հենակետի դեր), որից հետո հաստափում է մի նոր, բուն Գծ-ին ընուրշ «լյա բեմոլ-սի բեկար» մեծացրած սեկունդա չպարունակող ձայնաշար «դո» կիսակաղանասային և վերջավորող ձայնով։ Գծի շարականների խա-զային պատկերի առանձնահատկություններից մեկն է փուշից ու իրար հա-ջորդող մի քանի շեշտերից կազմված համակցություն բանատեղծական բնագրի 2-րդ նախադասության սկզբում, այսինքն՝ նոր լադի հաստատման պահին։ Կարելի է ենթադրել, որ այդ համակցությունը ցուց է տալիս բուն Գծ-ի համեմատ ավելի բարձր ռեգիստրում երգվող Գծ-դարձվածքի հաս-տատման հետ կապված աստիճանական վերընթաց շարժում, ընդ որում փուշը նշում է շարժման ելակետը, իսկ յուրաքանչյուր շեշտը՝ դեպի ձայնա-շարի հաջորդ աստիճանն ուղղված մեղեղիական քայլ։ Գծ-դարձվածքի շա-րականների տները մեծածավալ են. համապատասխան բանատեղծական բնագրերը աչքի են ընկնում բազմախոսությամբ։ Գծ-դարձվածքը լայն տա-րածում է ստացել Խաչի 4-րդ օրվա կանոնի «Սըրբութիւն սըրբոց» երգի ստեղծումից հետո (հենինակ՝ Ստեփանոս Ապարանցի, 10-րդ դար. տես նո-տային օրինակ <sup>27</sup>), որ բերված է երգի առաջին տունը)։ Նույն մեղեղուու օրինակով են կաղապարված Ն. Շնորհալու (Պենտեկոստեի 4-րդ օրվա կա-նոնի Օրինությունը, Հայրապետաց կանոնի Տեր երկնիցը, և. Եփրեմին նվիր-ված Մանկունքը և այլն), Հ. Երզնկացու (ս. Ներսես Բայրապետի կանոնի Տեր երկնիցը) և այլոց մի շարք երգերը։

### Նոտային օրինակ 7


Կողման կողով շնորհայն է հաջույղ առք ու խոչ եղ պէր. տակն ենու սիս չըգնում առաւ-րար  
շնորհ ի ան համառա-ւացնու ու են վանաօրէն սուրբ բանական կան-քանեաց. առաջնուն  
ու ին պէր, պահպան ընթան ու հովանու խո-չուն ու ու առք.

Երրորդ կողմ կամ Վառ ձայն (Գկ)։ Այդ ձայնեանակի գլխավոր հատ-կանիցն է լադի կիսաքրոմատիկ իջեցված 4-րդ աստիճանը, որի բարձրու-թյունը տատանվում է «դո»-ի և «դո բեմոլ»-ի միջև (Նոտային օրինակնե-րում այդ շեղումը ցուց է տրվում «դո»-ին կցված թեր գծիկով)։ Բանաձևա-յին կազմի առումով Գկ շարականները, ընդհանրապես, քիչ են տարրերվում միմյանցից (իբրև նմուշօրինակ տես մեր 2-րդ նոտային օրինակում բեր-ված հատվածը)։ Շարակնցում երբեմն կարելի է հանդիպել Գկ-դարձվածք մեղեղիների, որոնց ձայնաշարը բուն Գկ-ի (իջեցված 4-րդ աստիճան) և բուն Գծ-ի (մեծացրած սեկունդա 2-րդ և 3-րդ աստիճանների միջև) յու-րահատուկ խառնուրդ է, ընդ որում երգերի սկզբանական և ավարտական մասերը մոտ են բուն Գկ-ին, մինչդեռ Գծ-ի հատկանիշները ի հայտ են գալիս երգերի մեջտեղի հատվածներում։

<sup>27</sup> Զայնագրիալ Շարական, էջ 774:

Գեղարձվածք երգերի խազերը սովորաբար պարունակում են բաղադրյալ, զարդարուն նշաններ. տես նոտային օրինակ 8<sup>28</sup>:

### Նոտային օրինակ 8



**Չորրորդ ձայն (Դճ):** Դճ գլխավոր տեսակից բացի, լայն տարածում է ստացել մի այլ տարրերակ, որի մեղեղիական կառուցվածքը որոշակի ինքնուրույնություն է ցուցաբերում շարականների տաղաչափության համար բրնորոշ, խմբական շեշտերի կանոնավոր հերթագայության վրա հիմնված ոիթմի մկատմամբ: Զա օրինակում բերված է այդ տարրերակի հատկանշական նմուշներից մեկը<sup>29</sup>: Խնչակն երևում է օրինակից, բնագրի սկզբնական, բարձր խմբական շեշտով ավարտվող «կիսատողը» («Որ օքէնըս սըրութեան պահոց...») կառուցված է ըստ ութ-ձայնի «խիստ ոճի» նորմաների. մեղեղու հետագա զարգացումը, սակայն, ունի համեմատաբար ազատ բրնույթ, ընդգրկելով բազմաթիվ ընդլայնված (2/4 տևողությամբ երգվող) վանկեր, որոնք հաղորդում են տվյալ մեղեղուն որոշակիորեն «արդիականացված» տեսք՝ Դճ և ընդհանրապես ութ-ձայնի «դասական» տաղաչափությանը խիստ կերպով հետևող նմուշների համեմատությամբ: Անդ «ընդարձակ» տարրերակի, ԳՃԵ-ի և մի քանի այլ անհատականացված մեղեղիական տիպարների նման, այդ եղանակը համապատասխանեցվում է հատկապես լայնածավալ, հարուստ աստվածաբանական բովանդակությամբ աշքի ընկնող բառային տեքստերի, որոնք լայն տարածում են ստացել գլխավորապես 12—13-րդ դարերում: Ն. Շնորհալու անվան տակ են մեզ հասել Դճ այդ տարատեսակի բազմաթիվ նմուշներ, որոնց թվում են, բացի Զա օրինակում ցիտված Աղուհացից 2-րդ կիրակիի կանոնի Օրինությունից, նաև Աղուհացից 5-րդ օրվա կանոնի Հարցը, Պենտեկոստեի 3-րդ օրվա կանոնի Հարցը և Ողորմյան, ս. Հովհաննես Մկրտչի ծննդյան կանոնի Հարցը, Վարդապատի 2-րդ օրվա կանոնի Օրինությունը, Մեծ ուրբաթի կանոնի արտակարգ ճոխ ու լայնածավալ «Այսօր ի կատարումն» Օրինությունը և բազմաթիվ այլ օրիներգեր: Նույն մեղեղիական բովանդակությամբ են բնութագրվում նաև նոյն ժամանակաշրջանի մյուս ստեղծագործողների շարականներ՝ Աստվածածնի ծննդյան կանոնի Հարցը, Մեծացուցեն, Ողորմյան, Ծաշուն (Հակոբ Կլայեցի), Աստվածածնի ավետման կանոնի Հար-

<sup>28</sup> Զայնագրյալ Շարական, էջ 549, 851:

<sup>29</sup> Զայնագրյալ Շարական, էջ 207:

ցը և Ողորմյան (Գրիգոր Վկայասեր), ս. Ներսես Մեծի կանոնի Հարցը, Ողորմյան, Մանկունքը (Հովհաննես Երզնկացի) և այլն: Խազային պատկերը, բնականաբար, հարուստ է 2/4 տևողություն ունեցող նշաններով (հատկապես բազմաթիվ են երկար, բութ և սուր խազերը):

Դա շարականների թվում կան նաև զարդարուն, բաղադրյալ խազերով աչքի ընկնող նմուշներ: Դրանցից մի քանիսը ցուց են տրված թթ-և օրինակներում<sup>30</sup>: Հեշտ է համոզվել, որ տվյալ մեղեդիները պարունակում են մի քանի ընդհանուր բանաձներ, այսինքն՝ պատկանում են Չորրորդ ձայնի միևնույն ստորաբաժանմանը: Համորեն ննջեցելոց շարքի կազմում գտնում ենք մի այլ յուրօրինակ նմուշ՝ երգ, որի արտակարգ ծավալուն բանաստեղծական տեքստը բաժանված է համահավասար, հնգավանկ անդամների (մի քանի պատահական քառավանճ կամ վեց վանկանի միավորներով): Թզ օրինակում բերված է երգի առաջին տունը<sup>31</sup>: Օրինակից երկում է, որ յուրաքանչյուր անդամի վերջին, գլխավոր շեշտ կրող վանկն ընդլայնված է (ճիշտ է, այդ առանձնահատկությունը միշտ չէ, որ իր արտահայտությունն է գտնում խազային բնագրում): Բոլոր կենտ անդամների երաժշտական կառուցվածքը հիմնված է մեկ ընդհանուր մեղեդիական բանաձնի վրա, մի այլ ընդհանուր բանաձն ընկած է բոլոր զույգ անդամների կառուցվածքի հիմքում, սակայն անդամների ճշգրիտ կրկնություններ հազվագյուտ են՝ ընդհանուր կաղապարի մեջ մասն տարբերակումներ մտցնելու շնորհիվ (փակագծերում նշենք, որ նախավերջին անդամի եզրափակող վանկը և ամրող վերջին անդամը ընդլայնված են՝ երգի տաճ ավարտի հետ կապված տեմպի բնական դանդաղեցման հետևանքով): Այսպիսով, մենք մեկ անգամ ևս կարող ենք համոզվել, որ երաժշտական բանաձների ստանդարտ, համապարտադիր լինելու հանգամանքը չի հակասում դրանք որոշակի սահմաններում ստեղծագործարար զանազանակերպելու հնարավորությանը. տվյալ առանձնահատկությունը ընդհանրապես բնորոշ է կանոնական երաժշտական արվեստին, որն առանց դրա անխոսափելիորեն կիանգեցվեր սակավաթիվ մեղեդիական պտույտների մշտական կրկնությանը և, հետևաբար, կզուկվեր որևէ ինֆորմացիոն արժեքից: 12-րդ կամ 13-րդ դարում ստեղծված այդ երգի հեղինակային պատկանելիության մասին ոչինչ ասել չենք կարող. տաղաչափության ու երաժշտական կառուցվածքի առումով այն Շարակնոցի կազմում ոչ մի զուգահեռ չունի:

Չորրորդ ձայնն ունի երկու դարձվածք (ճիշտ է, Ն. Թաշճյանի կողմից կազմված ձայնաշարերի ցանկում Դա դարձվածքների թիվը հասնում է երեքի, սակայն երրորդ դարձվածքը ձայնագրյալ Շարակնոցում գործնականում չի հանդիպում): Դա առաջին դարձվածքի ձայնաշարը համընկնում է բուն Դա ձայնաշարի հետ, սակայն դրա ավարտական հնչյունը «լյա» է<sup>32</sup>: Խազային պատկերի համար հատկանշական է բնագրի մեջտեղի բանաստեղծությունը (հատված Պողորմյան մասը):

<sup>30</sup> Զայնագրյալ Շարական, էջ 318 (հատված Պահոց շարականներից), 1060 (հատված Հարության ավագ օրինություններից), 292 (հատված Սեբաստիայի 40 մամկանց կանոնից), 722 (8-րդ դարի իշխան Աշոտ Բագրատունուն վերագրվող Խաչի 8-րդ օրվա կանոնի Ողորմյան մասը):

<sup>31</sup> Զայնագրյալ Շարական, էջ 1010—1011:

<sup>32</sup> Խոտային նշաններով գրի առնված մի այլ Շարակնոցում (Տնտեսյան Ն. Շարական ձայնագրյալ, Խարանպոլ, 1988) Դագ-1 երգերը ավարտվում են «սոլ» վերջնաձայնով:

ծական ֆրազի եզրափակող վամկին համապատասխանող երկար + փաթուր բաղադրյալ նշանը՝ խազ, որ չի հանդիպում բուն Դճ շարականներում (տես օր. 9Ը)<sup>33</sup>: Դճ երկրորդ դարձվածքը ունի ալտեռացված հնչյուններ, որոնք երևան են գալիս մեղեդու մեջտեղի մասում (ոնք բեմով, մի բեկար, սոլ դիեզ). համապատասխան հատվածներում մեղեդու մեջ կարծես ներթափանցում են ԲԿ-«դարձվածքի» և ԱՃ-ի տարրերը): Խազային պատկերը աչքի է ընկնում երկու բենեկործ խազերից բաղկացած մի քանի բաղադրյալ նշաններով (օր. 9Ը)<sup>34</sup>: Դճ-դարձվածքները, հավանաբար, ունեն նոր ծագում, տարածված են 12—13-րդ դարերի հետինակների շարականներում:

**Տորորդ կողմ կամ Վերջ ձայն (ԴՃ):** Այդ ձայննեղանակի որոշ ստորաբաժանումները դարձյալ կապված են վանկական տաղաչափության զարգացման ընթացքում առաջացած, բոլոր երկրորդ կիսատողերի (երրեմն՝ կրկներգի բացառությամբ) վանկային ծավալի հաստատունությամբ բնութագրվող տաղաչափական ձևերի հետ: Մեկ անգամ ևս ընդգծենք, որ նման ձևերը Շարականցում լայն տարածում են ստացել հատկապես սկսած Ն. Շնորհալուց: Դրանցից մեկի՝ 7 վանկանի երկրորդ կիսատողերով ուստանավորի ոիթմով է պայմանավորված Դկ յորօինակ տարբերակի կառուցվածքը (տես օր. 10Օ)<sup>35</sup>, որ երկրորդ և չորրորդ, հաստատուն ծավալ ունեցող անդամներին համապատասխանող բանաձները կազմված են նոյնատիպ ելեջներից, ոչ էական տարբերակումներով, մինչեւ առաջին և երրորդ, վանկային ծավալի առումով փոփոխական անդամների ելեջային բովանդակությունը տարբեր է: Եթզի մյուս տներում (ինչպես նաև Դկ նոյն տարատեսակին պատկանող մյուս երգերում) երկրորդ և չորրորդ անդամները մընում են անփոփոխ, մինչեւ առաջինը և երրորդը՝ ընդլայնվում կամ կրճատվում են, նայած վանկային ծավալի տաստանումների: Խազային պատկերը աչքի է ընկնում միմյանց հաջորդող փուշ-սուլ-փուշ (1—2 կետով) նշաններով յուրաքանչյուր տան սկզբում և ծնկներ խազը պարունակող բաղադրյալ նշանով՝ բնագրի երրորդ անդամի վերջին վամկի վրա: 10Օ օրինակում մեջբերված Աստվածածնի վերափոխման 2-րդ օրվա կանոնի Օրինության առաջին կեսի կողքին, նոյն մեղեդիական տիպի են պատկանում և Գրիգոր Լուսավորչի կանոնի Տեր երկնիցը, Պեճտեկոստեի 4-րդ օրվա կանոնի Ողորմյան, և Հովհաննես Մկրտչի ծննդյան կանոնի Ծաշուն, և Սահակ Պարթևի հիշատակին նվիրված Մանկունքը (բոլորի հետինակն է Ն. Շնորհալին), Զատկի կանոնի Ողորմյան (Ն. Լամբրոնացի) և այլն, ինչպես նաև Աստվածամայնության առաջին օրվա կանոնի ճանաչված «Խորհուրդ մեծ» Օրինությունը (հատկապես՝ դրա 4—6-րդ տները), որի ծագման ժամանակի մասին մենք արդեն առիթ ենք ունեցել մեր կարծիքը հայտնելու<sup>36</sup>:

Տաղաչափական նոր ձևերի հետ կապված Դկ տարատեսակներից է նաև 10Օ օրինակում բերված եղանակը<sup>37</sup>: Այս անգամ գործ ունենք վեց վանկանի 2-րդ կիսատողերով ուստանավորի հետ (ընդհանուր ոիթմը խախտող կրկներգի բացառությամբ: Պետք է նշել, որ ոիթմը երրեմն խախտվում է նաև պատահական նինգ վանկանի անդամների առաջ գալու հետևանքով,

<sup>33</sup> Զայնագրյալ Շարական, էջ 18:

<sup>34</sup> Զայնագրյալ Շարական, էջ 40—41:

<sup>35</sup> Զայնագրյալ Շարական, էջ 748:

<sup>36</sup> Հակոբյան Լ., Հայկական շարականների տաղաչափությունը, էջ 75—76:

<sup>37</sup> Զայնագրյալ Շարական, էջ 752:



ինչպես 10ր օրինակի երրորդ ֆրազի 2-րդ կետում: Նույն երգի հետագա տեղում նման պատահական խախտումներ այլևս չեն հանդիպում): Բոլոր զույգ, հաստատուն անդամները դարձյալ համապատասխանեցվում են նոյնատիպ մեղեդիական բանաձևների, իսկ բոլոր կենտ, փոփոխական անդամների երածշտությունը տարբեր է: Դկ տվյալ տարատեսակը նոյնպես պատկանում է Ն. Շնորհալու նախասիրվածների թվին (Աստվածածնի վերափոխման 2-րդ օրվա կանոնի, Վարդավառի 3-րդ օրվա կանոնի, և Ալենդրանց կանոնի Ողորմյա մասերը): Իբրև հատկանշական խազ հանդես է գալիս կրկնակի բութ+երկար բաղադրյալ խազը կրկներգի առաջին վաճկի վրա:

Ն. Շնորհալու ստեղծագործության մեջ լայն տարածում առացած Դկ ավելի զարդարուն տարբերակներից է Որոտման որդիների կանոնի Օրինությունը (օր. 10դ<sup>38</sup>). հնմտ. նաև Աստվածածնի վերափոխման 2-րդ օրվա կանոնի Օրինության Դ—Զ տները, Քրիստոսի 72 աշակերտների կանոնի Օրինությունը, և. Ստեփանանու Ունեցուն նվիրված շարականը և այլն): Այսուել տաղաչափական հիմքը ազատ է (ճիշտ է, երբեմն դիտվում է ձգտում դեպի զույգ կիսատողերի հինգ վանկանի ծավալ), իբրև հատկանշական խազ հանդես է գալիս երկար+վերնախաղ բաղադրյալ նշանը բանատեղծական բնագրի երրորդ ֆրազի առաջին ուժեղ վանկի վրա: Դկ զարդարուն «Հնորհալիական» տարատեսակներից պետք է հիշատակել նաև Ա. Գրիգոր Լուսավորչի կանոնի Հարցը (օր. 10դ<sup>39</sup>), Վարդավառի 3-րդ օրվա կանոնի Տեր երկնիցը (օր. 10ե<sup>40</sup>), Աստվածածնի վերափոխման 2-րդ օրվա Հարցն ու Տեր երկնիցը, և. Ալենդրանց կանոնի Հարցը (այդ բոլոր շարականները նոյնատիպ են, ունեն ընդհանուր մեղեդիական բանաձևներ և նման են միմյանց խազերի տեսակներից). մի շարք այլ զարդարուն եղանակներ այս կամ այն շափով հարում են Դկ «ստեղիներին» (տես ստորև):

Դկ դարձվածքը հայտնի է երեք հիմնական տարբերակներով: Առաջինը՝ և. Հոփիսիմյանց կանոնի ճանաչված «Անձինք Արուիրեալըք» Օրինությունը (հեղինակ՝ Կոմիտաս Աղցեցի, 7-րդ դար, տես օր. 10դ<sup>41</sup>) Օրինության առաջին սունը) գրված է շեշտական տաղաչափությամբ (բնագրի լուրաքանչյուր «կիսատող» պարունակում է 2 ուժեղ վանկ, անկախ վանկերի ընդհանուր բանակից: Դա զուտ շեշտական տաղաչափության միակ նըմուշն է ամբողջ Շարակնոցում): Երկրորդն օգտագործված է նոյն Հոփիսիմյանց կանոնի Համբարձի մասում, և. Ալենդրանց կանոնի Մանկունքում (հեղինակ՝ Հովհաննես Սարկավագ Խմատաեր, 11—12-րդ դարեր), ու ս. Վարդամանց կանոնի Օրինությունում (հեղինակ՝ Ն. Շնորհալի): Նշված երգերը գրված են ոչ թե շեշտական, այլ վանկական տաղաչափությամբ. ըստ այդմ եղանակի բանաձևային կազմի մեջ մտցվում են որոշ փոփոխություններ (տես օր. 10է<sup>42</sup>): Նշենք, որ Հովհաննես Սարկավագի նմուշներում վանկական տաղաչափությունը դեռևս լիովին կայունացած չէ. առանձին անդամների ծավալը տատանվում է 6 և 8 վանկերի միջև՝

Անըսկիզբըն բանն Աստուած / որ վասըն մեր համբեր մահու. (7+8)

<sup>38</sup> Զայնագրյալ Շարական, էջ 335:

<sup>39</sup> Զայնագրյալ Շարական, էջ 335:

<sup>40</sup> Զայնագրյալ Շարական, էջ 780:

<sup>41</sup> Զայնագրյալ Շարական, էջ 690:

<sup>42</sup> Զայնագրյալ Շարական, էջ 702:

Բառնալով ըգդատակնիք / անհծիցն առ ի մէնջ. (7+6)  
 Գերապանծ մաքրութեամբ / ըզմարդիկ վերագրեաց. (6+6)  
 Խաչակից իր և վըկայք / կամատր մահուամբն իրեանց: (7+7)  
 Դիմամարտ գոլով սըրբոցն / ընդ կուապարիշտ պաշտամունան (7+7)  
 Երշանիկ ճակատամարտք / յայտնեցան անպարտելիք. (7+7)  
 Զի զԱստուած բոլորից / տիրաբար սիրեցին. (6+6)  
 Էակցին Հօր հետևեալ / ստացան ըզթագրն պարձանաց: (7+8)  
 և այլն)

Ինչ վերաբերում է Ն. Շնորհալու նոյնատիպ երգին, ապա այստեղ 7 և 8 վանկանի անդամների կանոնավոր հետթագայության սկզբունքը իրագործված է ավելի հետևողական կերպով (ճիշտ է, ոթիմը երբեմն փոքր-ինչ խախտվում է պատահական Յ վանկանի անդամների առաջ գալու հետևանքով<sup>43</sup>)

- 1) Նորահրաշ պըսակաւոր / և գօրագուիս առաքինեաց. (7+8)  
 Վառեցար զինու հոգույն / արիաբար ընդդէմ մահու, (7+8)  
 Վարդան քաջ նահատակ / որ վանեցեր ըզթըշնամին. (6+8)  
 Վարդագոյն արեամբը քո / պըսակեցեր զեկեղեցի: (7+8)
- 2) Երկնաւոր թագաւորին / զինու յաղթեալ պատերազմին. (7+8)  
 Խորհական իմաստութեամբ / խոհեմացեալ անձուապէս. (7+8)  
 Խորին խորհրդական / և ծանուցեալ անուն բարի (6+8)  
 Խաշելոյն վըկայ եղեալ / հեղմամբ արեան պըսակեցաւ: (7+8)
- 3) Ռեննական լուսով լցցեալ / արիացեալն քաջըն Արտակ. (7+8)  
 Թաքաւեալ ի կարմրութին / բոստրային բըդինեալ աղբերն. (7+8)  
 Զփըրկականն ըմպէալ զբաժակ / և մըկըրտեալ արեամբն իրով. (7+8)  
 Դասակցեալ ընդ անմարմնոցն / երրորդութեան երգել ըզիառու: (7+7)  
 (և այլն)

Հովհաննես Սարկավագի և Ն. Շնորհալու նոյնատիպ օրիներգերի միջև դիտվող նման փոխմարաբերությունը վկայում է այն առաջընթացի մասին, որն ապրեց տաղաչափության արվեստը տվյալ երկու վարպետներին իրարից բաժանող ժամանակահատվածի ընթացքում: Նշենք նաև, որ Դկ դարձվածքի ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ տարբերակը ներկայացնող օրիներգերը գրված են ակրոստիքով՝ սկզբունքով՝ առանձին նմերի կամ տողերի սկզբնական տառերը շարվում են այբբենական կարգով, իսկ Ն. Շնորհալու երգի դեպքում՝ կազմում են «Ներսէսի երգ» բառերը: Դկ դարձվածքի երրորդ տարբերակը մեղեդիական բովանդակության առումով քիչ է տարբերվում նախորդներից. այն պարզապես համապատասխանում է ազատ տաղաչափությամբ գրված ուտանավորների և ունի ավելի բարդ խազային պատկեր, յուրօրինակ զարդարում նշաններով (տես օր. 10p՝ հատված Քրիստոսի 72 աշակերտների կանոնի Ողորմյա մասի<sup>44</sup>). հմմտ. նաև Հարության շարքի «Վասըն մերոյ փըրկութեան» Ողորմյան): Եթե Դկ տարատեսակներից մեկը հանդես է գալիս նաև զարդարում խազերով հարուստ բավական տարօրինակ մի օրիներգ (Աստվածահայտնության 4-րդ օրվա կանոնի Ողորմյա, տես օր. 10p<sup>45</sup>), որ փաստորեն բուն ԳՃ Ի:

<sup>43</sup> Զայնագրյալ Շարական, էջ 890—891:

<sup>44</sup> Զայնագրյալ Շարական, էջ 172:

<sup>45</sup> Զայնագրյալ Շարական, էջ 87:

Վերջապես, Դկ ձայնեղանակն ունի այսպես կոչված ստեղի տարատեսակներ, որոնք առանձնանում են արտակարգ զարդարուն մեղեղիական ու նույնափոխ զարդարուն ու թանձր խազային ֆակտորայով (որպես հատկանշական նմուշ տես օր. 10՛՝ Պահոց Ողորմյաներից մեկի սկրնական հատվածը<sup>46</sup>): Հմտ. նաև նոյնափոխ հարդուստ ֆակտորայով աչքի ընկնող Բկ-ստեղիները, օր. 6թ. Ժ): Ստեղի եղանակները ընթանում են բանաստեղծական միմքից լիովին անկախ. այդ իսկ պատճառով ավանդական երաժշտական տեսությունը դրանք չի դիտում իբրև ութ-ձայն համակարգի իրավականակար բաղադրամասեր:

Համ Ե. Տնտեսյանի, գոյություն ունեն չորս Դկ-ստեղի եղանակներ<sup>47</sup>: Առաջին տարատեսակի են պատկանում «Առաքեալք Աստուծոյ» (Կանոն Քրիստոսի 72 աշակերտների), «Լուսապլասակացն» (Կանոն Սերաստիայի 40 մասնուկների), «Լերինք ամենայն այսօր ցնծան» (Կանոն Վարդապահի 3-րդ օրվա), «Որ արինիահրաշ» (Կանոն Ա. Պետրոս և Պողոս առաքյալների), «Պարունակեալ» (Կանոն խաչի 8-րդ օրվա) և մի շարք այլ օրիներգերը: Այդ տարատեսակը ձայնաշարի առումով նման է բուն Դկ ձայնեղանակին: Երկրորդ տարատեսակը ներկայացված է, ի միջի այլոց, Պահոց, «Զարդուրեալ դողացաւ» Ողորմյայով, Հովհան մարգարեի կանոնի «Ողորմութեանց բաշխող» օրիներգով և այլ նմուշներով. դրա ձայնաշարը պարունակում է Դկ դարձվածքի համար բնորոշ ցածր «ու բեմոյ»—«մի բեկար» մեծացրած սեկունդա ինտերվալը: Երրորդ ստեղին (որի ձայնաշարը նոյնափես մոտ է Դկ դարձվածքի ձայնաշարին), ներկայացված է Հովհան մարգարեի կանոնի մի քանի հատվածներով («Կանխեալ Հովհանու», «Ծագեալ առաօտ», «Ցովան մարգարէն»), Ղազարի Հարության կանոնի «Յիասուս միածին» Մանկունքով, Բեթղեհեմի և մանկանց կանոնի «Երանելի սուրբ մանկունք» երգով: Վերջապես, Դկ չորրորդ ստեղի երգերից պետք է հիշատակել Որոտման որդիների կանոնի «Որ յանըստուեր» և Հովհան Ռոկերամին Ավիրված «Որ յանըսկիզբն ի Հօրէ» Մանկունքները: Մի քանի եղանակներ, ըստ Տնտեսյանի, 3-րդ և 4-րդ ստեղիների խառնուրդ են: Ինչպես, ստեղի եղանակների ճնշող մեծամասնությունն ունի ուշ ծագում, ստեղծված է Ն. Շնորհալու և հայկական Վերածնության այլ վարպետների կողմից, այդ դարաշրջանին հատուկ մեծակերտ-զարդարարական ոճով՝ ոճ, որի ազդեցությունը ներթափանցում է նոյնական խիստ կանոնական, ստեղծագործական նորարարությունների նկատմամբ օրգանապես անըմբուղունակ երաժշտական արվեստի ոլորտը: Այսպիսով, 12—13-րդ դարերում կանոնական ութ-ձայնը աստիճանաբար կորցնում է ստեղծագործողների նախաձեռնությունը սանձահարող հիմնական ուժի հշանակությունը. դրա հետևանքով Շարակնոցի համար նոր երգեր ստեղծելը, վերջին հաշվով, դառնում է անհմաստ: 13-րդ դարից հետո նոր շարականներ այլևս չեն գրվում, իսկ նոգեր ներգաստեղծության արվեստի պահանջները շարունակում են բարարվել ոչ կանոնական ժամերից տաղերի և գանձերի հաշվին:

<sup>46</sup> Ձայնագրյալ Շարական, էջ 366:

<sup>47</sup> Տնտեսյան Ե., Աշված աշխատությունը, էջ 70—71:

Վերջապես, Դկ ձայնեղանակն ունի այսպես կոչված ստեղի տարատեսակներ, որոնք առանձնանում են արտակարգ զարդարուն մեղեղիական ու նույնափոխ զարդարուն ու թանձր խազային ֆակտորայով (որպես հատկանշական նմուշ տես օր. 10՛՝ Պահոց Ողորմյաներից մեկի սկրնական հատվածը<sup>46</sup>): Հմտ. նաև նոյնափոխ հարդուստ ֆակտորայով աչքի ընկնող Բկ-ստեղիները, օր. 6թ. Ժ): Ստեղի եղանակները ընթանում են բանաստեղծական միմքից լիովին անկախ. այդ իսկ պատճառով ավանդական երաժշտական տեսությունը դրանք չի դիտում իբրև ութ-ձայն համակարգի իրավականակար բաղադրամասեր:

Համ Ե. Տնտեսյանի, գոյություն ունեն չորս Դկ-ստեղի եղանակներ<sup>47</sup>: Առաջին տարատեսակի են պատկանում «Առաքեալք Աստուծոյ» (Կանոն Քրիստոսի 72 աշակերտների), «Լուսապլասակացն» (Կանոն Սերաստիայի 40 մասնուկների), «Լերինք ամենայն այսօր ցնծան» (Կանոն Վարդապահի 3-րդ օրվա), «Որ արինիահրաշ» (Կանոն Ա. Պետրոս և Պողոս առաքյալների), «Պարունակեալ» (Կանոն խաչի 8-րդ օրվա) և մի շարք այլ օրիներգերը: Այդ տարատեսակը ձայնաշարի առումով նման է բուն Դկ ձայնեղանակին: Երկրորդ տարատեսակը ներկայացված է, ի միջի այլոց, Պահոց, «Զարդուրեալ դողացաւ» Ողորմյայով, Հովհան մարգարեի կանոնի «Ողորմութեանց բաշխող» օրիներգով և այլ նմուշներով. դրա ձայնաշարը պարունակում է Դկ դարձվածքի համար բնորոշ ցածր «ու բեմոյ»—«մի բեկար» մեծացրած սեկունդա ինտերվալը: Երրորդ ստեղին (որի ձայնաշարը նոյնափես մոտ է Դկ դարձվածքի ձայնաշարին), ներկայացված է Հովհան մարգարեի կանոնի մի քանի հատվածներով («Կանխեալ Հովհանու», «Ծագեալ առաօտ», «Ցովան մարգարէն»), Ղազարի Հարության կանոնի «Յիասուս միածին» Մանկունքով, Բեթղեհեմի և մանկանց կանոնի «Երանելի սուրբ մանկունք» երգով: Վերջապես, Դկ չորրորդ ստեղի երգերից պետք է հիշատակել Որոտման որդիների կանոնի «Որ յանըստուեր» և Հովհան Ռոկերամին Ավիրված «Որ յանըսկիզբն ի Հօրէ» Մանկունքները: Մի քանի եղանակներ, ըստ Տնտեսյանի, 3-րդ և 4-րդ ստեղիների խառնուրդ են: Ինչպես, ստեղի եղանակների ճնշող մեծամասնությունն ունի ուշ ծագում, ստեղծված է Ն. Շնորհալու և հայկական Վերածնության այլ վարպետների կողմից, այդ դարաշրջանին հատուկ մեծակերտ-զարդարարական ոճով՝ ոճ, որի ազդեցությունը ներթափանցում է նոյնական խիստ կանոնական, ստեղծագործական նորարարությունների նկատմամբ օրգանապես անըմբուղունակ երաժշտական արվեստի ոլորտը: Այսպիսով, 12—13-րդ դարերում կանոնական ութ-ձայնը աստիճանաբար կորցնում է ստեղծագործողների նախաձեռնությունը սանձահարող հիմնական ուժի հշանակությունը. դրա հետևանքով Շարակնոցի համար նոր երգեր ստեղծելը, վերջին հաշվով, դառնում է անհմաստ: 13-րդ դարից հետո նոր շարականներ այլևս չեն գրվում, իսկ նոգեր ներգաստեղծության արվեստի պահանջները շարունակում են բարարվել ոչ կանոնական ժամերից տաղերի և գանձերի հաշվին:

<sup>46</sup> Ձայնագրյալ Շարական, էջ 366:

<sup>47</sup> Տնտեսյան Ե., Աշված աշխատությունը, էջ 70—71:

## Նոտային օրինակ 10

Այսօր վանեառելի ձեղման էն գեր, զա-քա- և առ խոր-հեր-դայ. Ի հո-ղանեկը գլուխ-ցորեան

գի- հաս-րե-ցը ի յե-կին:

Մը ան-մարմին ընկերամբ ասրաւ ծոքան ի գրք. Ֆ- ա-շար մարտով յարգանի կոսին ան-է-ղապես գոլով.

այսօր վիշտունը շուրջ խորին երկ-նի և երկ-դի յանկորովս ի կենան. ա- դաշանոց մօր է ո-ղջաման

որ-դի ենակու-են

Որ էն յէ-ու-թան որ-դի միշտյէ-նն ան-է-ղա-նե-լի ծընկու հայ- բա-կան, զոր ի վէ-րուս

հետեւյն որ-դին ո- բոր-ման. և յայրետ-ցին որդու մարդկան վետ- կա-պէս խորհուրդ:

Ի հօրէ ա-ռադտաւ ա-րեգանէ ար- դար ծագեցը ընդ փր-ե- վեր ըւ-լու է ո- ռա-

ֆլուն. ըւ-նիկ բա-րէ-բանենք, մուրըստ հոր- ցը մէ-րու:

Խո- օր ընդ հրեշտակի բարզուն ցըն օնակունի փո- նին. Ի ձագու ի- յա-կանի լուսոյ անկուս-


էու - թամեր. օրինենի վեռ է- մ - կի- յօն հօր, որ է-կիր ի վերեւ ըսդ-ե- վեր:

Անշին աղ-ու-թան - լժ սի-րոյն բնիքուն երկան- ըր և անունը և կուսանի ի- յա-կուսան.

Ի պարծո-նը չեր բարձրացնալ փո-նէ մայր Արօն դըակերտն ի- րուն.

Անշունին - ըն բանեանակ, որ վան մեր համբու մանու. բանեանը ընդ անականին ա- ի- եր առ ի մէնզ.

գերապան մայրութեան բնարդի վերաբերան. խաչին ի ս- կամար մահուանք ի ըր ուն:



\* \* \*

Ավարտեցինք շարականների ձայնեղանակների ու նրանց տարատեսակների դասակարգմանը նվիրված մեր համառոտ ակնարկը<sup>48</sup>: Շարադրված նյութը հնարավորություն է տալիս խազային նշանների, իբրև միջնադարյան երգիշ-կատարողին Շարակնոցի երգերի տարատեսակների ամբողջ բազմազանության մեջ կողմնորոշելու միջոցի մասին դատելու համար. գրեթե ամեն մի ստորաբաժանումը ունի յուրօրինակ խազային պատկեր, որ պարզորոշ կերպով տարբերվում է տվյալ ձայնեղանակի մյուս տեսակների խազային պատկերից, այնպես որ տեսակներ «շփորելը» փաստորեն անհնարին են: Որպես լրացուցիչ, իսկ երբեմն նույնիսկ գլխավոր կողմնորոշող միջոց հանդես է գալիս երգերի տաղաչափությունը: Ամփոփելով, որոշենք եղանակների ու նրանց ստորաբաժանումների ընդհանուր թիվը: 8 գլխավոր եղանակների կողքին առանձնանում է 32 ստորաբաժանում (Աճ-դարձվածքի 2 տեսակ, «քուն» Ակ, որն իրականում Ակ-դարձվածք է, Բճ 4 տեսակ, Բճ-դարձվածք, Բկ 4 տեսակ, Բկ երկու ստեղի, Գճ-դարձվածք, Գկ-դարձվածք, բուն Դճ 3 տեսակ, Դճ երկու դարձվածք, բուն Դկ 4 տեսակ, Դկ-դարձվածքի 3 տեսակ, Դկ 4 ստեղի): Այդ թվին կարելի է ավելացնել նաև 4 եղանակ, որոնց ինքնուրույն լինելը այս կամ այն պատճառներով թվում է տարակուսելի (տես մեր Յն, Յւ, Յզ և 10թ նոտային օրինակները): Այսպիսվ, տարատեսակների ընդհանուր քանակը տատանվում է քառասունի և քառասունչորսի միջև, այսինքն՝ փաստորեն համընկնում է Կոմիտասի կողմից նշված (տես սույն հոդվածի սկիզբը) թվի հետ:

<sup>48</sup> Այսունի ամտեսված են որոշ նվազ նշանակություն ունեցող եղանակներ, ինչպես, օրինակ, Հարության շարքի «Ընդ կանայսն հողաբերսն» Տեր երկնիցի տարօրինակ 8-րդ տունը (Զայնագրյալ Շարական, էջ 456):

## Հավելված

1/8	1/4	2/4
o Խոչ	/ լեզր	~ Երկար
\ բուժ	/ սուր	) բուր
✓ փուլ	)	Ր պարույք
ɔ ռորակ	Ր	Վ վերևախաղ
ɔ ծունկ	Ր	Բ բնեկործ
Ն խուն	Ր	Ց ենեներ
~ թաշ	w/ Ներդիսախաղ	Վ վարկ
	f	Ց փարուցք
	՛	
	~	

Հիմնական խագերի աղյուսակ

